ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
17/11/2010թ թիվ 25-Լ որոշմամբ

Փոփոխված է 20/05/2011թ թիվ 56-Լ որոշմամբ
13/12/2013թ թիվ 40-Լ որոշմամբ
27/12/2013թ թիվ 53-Լ որոշմամբ
24/06/2014թ թիվ 24-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում
«31» հուլիսի 2014թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-010

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2014

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ ապահովագրական ընկերություններ) անձամբ կամ լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով ԱՊՊԱ պայմանագիր (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված «տարանցիկ փոխադրում» և «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմներով, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների առևտրով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վաճառքի համար Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր) կնքելիս պարտավոր են նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) տրամադրել Հավելվածով սահմանված փաստաթուղթը և պահանջել մանրամասն ծանոթանալուց հետո ստորագրել այն՝ նշելով անունը, ազգանունը և ստորագրման ամսաթիվը: Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից ստորագրված փաստաթուղթը պահվում է ապահովագրական ընկերության մոտ՝ ԱՊՊԱ պայմանագրի՝ ապահովագրական ընկերության օրինակին ամրացված ձևով:

1.1. Ապահովագրական ընկերությունները (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով) առանց հաշվառման համարանիշերի ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս պարտավոր են ապահովադրին (նրա լիազորած անձին) տրամադրել սույն կանոնների Հավելված 2-ով սահմանված և նույն հավելվածով սահմանված կարգով լրացված տեղեկանքը, որն էլ ապահովադրի (նրա լիազորած անձի) կողմից ներկայացվում է իրավասու մարմին՝ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման կամ վերահաշվառման իրականացման նպատակով, իսկ հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինման ենթակա հաշվառման համանիշերով ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս պարտավոր են ապահովադրին (նրա լիազորած անձին) տրամադրել սույն կանոնների Հավելված 3-ով սահմանված պարտավորագիրը: Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հաշվառել սույն կետի համաձայն տրամադրված տեղեկանքները: *(1.1-րդ կետը լրաց. է 24/06/2014թ թիվ 24-Լ)*

2. Ապահովագրական ընկերությունները նախքան ԱՊՊԱ պայմանագիր կնքելը (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալների միջոցով), բայց ոչ շուտ, քան պայմանագրի կնքումից մեկ օր առաջ, պարտավոր են հարցում կատարել Տեղեկատվական համակարգ համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրի առկայության և դրա գործողության ժամկետի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Սույն կետով նախատեսված տեղեկությունների հիման վրա ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) պետք է առաջարկվի ընտրել ԱՊՊԱ պայմանագրի գործողության այնպիսի ժամկետ, որը կբացառի միևնույն ժամանակահատվածում մեկից ավելի ԱՊՊԱ պայմանագրերով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրումը: Համաժամանակյա (արդեն կնքված պայմանագրի գործողության ժամկետի հետ թեկուզ մեկ րոպեով համընկնող) գործողության ժամկետով պայմանագրի կնքումն արգելվում է և պետք է մերժվի

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով: Սույն կետով նախատեսված հարցման գործընթացում պետք է պահպանվեն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացին ներկայացվող պահանջները սահմանող կանոններով նախատեսված անվտանգության ապահովման միջոցները:

3. Սույն կանոնների 2-րդ կետով նախատեսված՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման արգելքը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ թեև այդ կետով նախատեսված տեղեկությունների հիման վրա ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) առաջարկած՝ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետը համընկնում է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված մեկ այլ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի հետ, սակայն, ըստ ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից ներկայացված փաստաթղթերի՝ այդ ԱՊՊԱ պայմանագիրն Օրենքի ուժով վաղաժամկետ դադարել է:

4. Սույն կանոնների 3-րդ կետով սահմանված դեպքում Օրենքի ուժով ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման փաստն արձանագրվում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում և համապատասխան տեղեկատվությունն անմիջապես ուղղարկվում է տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերությանը:

5. Ապահովագրական ընկերություններն իրենց (ներառյալ՝ իրենց լիազորված անձանց կամ ապահովագրական գործակալներին) դիմած անձին վերջինիս համար նախընտրելի պայմաններով ԱՊՊԱ պայմանագրի կնքումը մերժելու դեպքում պարտավոր են տվյալ անձի գրավոր դիմումը ստանալու պահից սկսած առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին գրավոր պատասխանել մերժման մասին՝ նշելով նաև մերժման հիմնավորումները:

Հավելված
«ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի
նկատմամբ պահանջների» կանոնների

ՀԱՎԱՍՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավաստում եմ, որ

1. տեղեկացված եմ և լիովին գիտակցում եմ, որ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրված է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, այսինքն՝ հատուցվելու են տվյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված վնասները և ***չեն հատուցվելու տվյալ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասները***:

2. տեղեկացված եմ, որ **իրավունք ունեմ** ԱՊՊԱ պայմանագիրը կնքել 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով և տեղյակ եմ յուրաքանչյուր ժամկետի ընտրության դեպքում ապահովագրավճարների մեծության մասին: Հավաստում եմ, որ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի ընտրությունը կատարվել է իմ կողմից:

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն, ամսաթիվ)

Հավելված 2
«ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի
նկատմամբ պահանջների» կանոնների

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք _____
1. (համար)

Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության կնքված պայմանագիր ունենալու մասին

Սույն տեղեկանքը տրվում է _____

_____
2. (անուն, ազգանուն, հայրանուն (անվանում), անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (ՀՎՀՀ))

առ այն, որ վերջինս ունի _____
3. (նույնացման համար և (կամ) թափքի համար և (կամ) շարժիչի համար և (կամ) հենասարքի համար)

ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ _____-ում
4. (ապահովագրական ընկերության անվանում)

կնքված ԱՊՊԱ պայմանագիր:

ԱՊՊԱ պայմանագրի գործողության սկիզբ՝ __/__/20__թ, ավարտ՝ __/__/20__թ
5. (օօ աա տտ) 6. (օօ աա տտ)

_____ _____
7. (ապահովագրական ընկերության անվանում) 8. (անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ. ___/___/ 20___թ.
9. (օօ աա տտ)

☐ 10. Սույնով պարտավորվում եմ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը ստանալուց հետո, անմիջապես ներկայացնել սույն տեղեկանքը տրամադրած անձին՝ ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը լրացնելու նպատակով, ինչպես նաև պահանջել հաշվառման համարանիշերի նշմամբ ԱՊՊԱ պայմանագիրը (ԱՊՊԱ պայմանագրի լրացումը):

Տեղյակ եմ, որ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը (տեխնիկական անձնագիրը) սույն տեղեկանքը տրամադրած անձին չներկայացնելու (հաշվառման համարանիշերի նշմամբ ԱՊՊԱ պայմանագիր (ԱՊՊԱ պայմանագրի լրացում չունենալու)) դեպքում կարող եմ ենթարկվել վարչական պատասխանատվության:

_____
11. (անուն, ազգանուն, ստորագրություն)

ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

1. Տեղեկանքը լրացվում է համակարգչի կիրառման միջոցով:
2. Տեղեկանքի 1-ին դաշտում լրացվում (գեներացվում) է ԱՊՊԱ վկայագրի սերիան և համարը:
3. Տեղեկանքի 2-րդ դաշտում լրացվում է՝

1) ֆիզիկական անձ ապահովադրի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

2) իրավաբանական անձ ապահովադրի դեպքում՝ անվանումը, ՀՎՀՀ-ն,

3) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,

4) օտարերկրյա պետության դեպքում՝ պետության անվանումը և պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,

5) համայնքի դեպքում՝ համայնքի անվանումը և համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը,

6) միջազգային կազմակերպության դեպքում՝ միջազգային կազմակերպության անվանումը:

4. Տեղեկանքի 3-րդ դաշտում լրացվում է ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի նույնացման համարը և (կամ) թափքի համարը և (կամ) շարժիչի համարը և (կամ) հենասարքի համարը:
5. Տեղեկանքի 4-րդ և 7-րդ դաշտերում լրացվում է ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության անվանումը:
6. Տեղեկանքի 5-րդ և 6-րդ դաշտերում լրացվում են համապատասխանաբար ԱՊՊԱ պայմանագրի գործողության սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:
7. Տեղեկանքի 8-րդ դաշտում լրացվում է ապահովագրական ընկերության անունից ԱՊՊԱ պայմանագիրը ստորագրած անձի անունը, ազգանունը և ստորագրվում է այդ անձի կողմից:
8. Տեղեկանքի «Կ.Տ.» դաշտում դրվում է ԱՊՊԱ պայմանագիրը կնքած ապահովագրական ընկերության կնիքը:
9. Տեղեկանքի 9-րդ դաշտում լրացվում է տեղեկանքի տրման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:
10. Տեղեկանքը տրամադրող անձը ապահովադրին (նրա լիազորված անձին) տեղեկացնում է վերջինիս՝ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը ներկայացնելու պարտականության և չներկայացնելու հետևանքների մասին, որից հետո ապահովադիրը (նրա լիազորված անձը) տեղեկանքի 10-րդ դաշտում կատարում է «√» նշումը, ինչպես նաև տեղեկանքի 11-րդ դաշտում ստորագրում և լրացնում է անունը, ազգանունը:

Հավելված 3
«ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացի
նկատմամբ պահանջների» կանոնների

Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր _____
(համար)

Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիրը հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինման ենթակա հաշվառման համարանիշներով կնքելուց բխող հավելյալ պարտավորության վերաբերյալ

Սույնով պարտավորվում եմ ԱՊՊԱ պայմանագրում նշված հաշվառման համարանիշերը հիմնական հաշվառման համարանիշերով փոխարինելու դեպքում անմիջապես հաշվառման վկայագիրը ներկայացնել սույն պարտավորագիրը տրամադրած անձին (տվյալ ապահովագրական ընկերությանը կամ նրա մասնաճյուղին կամ գործակալին)՝ ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի փոփոխված հաշվառման համարանիշերը լրացնելու նպատակով:

Տեղյակ եմ, որ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերի փոխարինման դեպքում ԱՊՊԱ պայմանագրում ավտոտրանսպորտային միջոցի փոփոխված հաշվառման համարանիշերը չլրացվելու դեպքում կարող եմ ենթարկվել վարչական պատասխանատվության:

_____ _____
(ապահովագրական ընկերության անվանում) (անուն, ազգանուն, ստորագրություն)

___/___/ 20___թ.
(օօ աա տտ)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

(Հավելված 3-ը լրաց. է 24/06/2014թ թիվ 24-Լ)